

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### *2020 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ*

2020 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 3338 թղթակցություն, առաքվել՝ 2083 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 9, ՀՀ վարչապետից՝ 177, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 324, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 382, պետական վերահսկողության ծառայությունից՝ 1, մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 743, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1173, գաղտնի թղթակցություն՝ 38, քաղաքացիներից՝ 486 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 152 դիմում, որից՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 3, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 116, մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 17, հանրապետական գործադիր մարմիններից՝ 11 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2020թ. առաջին եռամսյակում կատարվել է 47 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: